փարախներում եւ բացօդեայ։ Անասունների արօտի համար բարձր լեռնալանջերում հիմնել են եայլաները. իսկ այծ ու ոչխարի համար ձորերում ձմեռանոցներ՝ արածացնելու համար։ Ընդհանրապէս աշնանը եւ ձմեռը ինչպէս ոչխարը, նոյնպէս եղջերաւոր խոշոր կենդանիները պահում էին արտերում եւ ագարակներում, որ պարարտացնեն։ Իսկ ախտաժէտները ապրում էին վանքերում, քանի որ նրանց ժողովրդի մէջ ապրելու թոյլ չէին տալիս ո՛չ ազատականները, ո՛չ էլ հողագործներն ու արհեստաւորները, որպէս զի չվարակեն բնակչութիւնը։ Ճորոխի ափերի վանքերը հաստատուած են հեթանոսութեան ժամանակ, երբ ընդհանրական օրէնքն էր — Զրադաշտական ծագումով — հեռացնել ժողովրդից ախտաժէտներին։ Երեւի հնումը ամէն մի իշխան նախարար ունէր 10–20 գեղ որոց մէջ ապրում էին ազատական սպաները։ Ախոռներում, դոմերում եւ եայլաներում ծառայեցնում էին ստրուկներին, որոց դերի էին ընում պատերազմի դաշտում։ Այսպէս բնակչութիւնը բաժնուած էր դասակարգերի, որից օրէնք չկար փոխուելու։ Ախոռներն ու դոմերը գեղերից հեռացնելու պատճառն այն պիտի լինի, որ ազատեղութիւնից հեռու պահեն գիւղական եւ մացրայի բնակիչներին։ Այս անջատումը քաղաքակրթութեան զարգացման հետեւանք